ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3-Ն

ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՄԱՐՏԻ 2016 Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 ԹՎ. ԹԻՎ 1444-Ն ՈՐՈՇՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՈՐՈՇՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 18 դեկտեմբերի 2014 թվ. թիվ 1444-Ն որոշումը մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարողների և ոռոգման ջուր օգտագործողների համար 2016 թվականին Հայաստանի Հանրապետության Արարատի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզպետարաններին ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին գումար հատկացնելու մասին, համայնքի ավագանին

Որոշում է

1. Ընդունել ի գիտություն մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց և ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը:
2. Հաստատել հողի հարկ վճարող անձանց ցուցակները:
3. Հաստատել հրետակոծության տակ գտնվող չօգտագործվող հողերի ցուցակը և հողի հարկի գումարը:
4. Աջակցել համայնքին սպասարկող ջրօգտագործողների ընկերությանը:

Պառավաքար համայնքի

ղեկավար՝ / Ռ. Մարգարյան